բազուկները հոլանի, գլխին···ֆօլօզը դրած··· դուք կը տեսնէք Ռշտունեաց լեռների այդ զաւակին, երկար նիզակը ձեռին, թեթեւ վագրի նման անցնում է մի ապառաժից դէպի միւսը··· Թշնամու հետ անգութ է, իբրեւ գազան, բարեկամի հետ բարի է իբրեւ հրեշտակ: Իր հովիտների բարձրահասակ սօսիների նման գեղեցիկ է նա··· Նրա կապուտակ աչքերը այնքան ընդարձակ եւ այնքան խորն են, որպէս այն կապուտակ ծովը, որ ծփում է նրա աշխարհի մօտ··· Ռշտունեաց պարզ երկնքի նման այդ խաղաղ դէմքը յանկարծ մռայլվում է, մթնում է, շանթեր է արձակում, երբ··· տեղի է ունենում վերահաս փոթորիկը··· Այդ միջոցին նա չէ խօսում, այլ որոտում է եւ այդ որոտման ձայնի մէջ դու լսում ես նախկին հայի ուժեղ բարբառը իր բոլոր կոշտ եւ անտաշ ձեւերով··· Եւ երբ դու տեսնում ես, թէ ինչպէս նա իր միակ զէնքով՝ նիզակով, կռւում է մթին ծմակից դուրս պրծած ամեհի վարազի հետ, իսկոյն հին առասպելը կենդանանում է քո մտքում եւ դու յիշում ես «Վիշապաբաղ» Վահագնին, հայոց անպարտելի Հերքուլէսին,— յիշում ես եւ սքանչանում ես նրա արժանի ժառանգների քաջութեան վրայ, որոնք գազանների հետ բնակուելով, սովորեցին գազանների հետ մարտնչել»···

III

Կան, անշուշտ, բաֆֆիական լեզուի ու ոճի մէջ դեռ բազմաթիւ անհարթութիւններ — որքա՜ն շտապ ու արագ կը գրէր, չմոռնանք այդ — կան անտեղի երկարաբանութիւններ ու կրկնութիւններ, բառերու, դերադրական ածականներու աւելորդ կուտակումներ, կայ տեղ-տեղ ռէտորիզմ, փքուն ու ճոռոմ բեմբասացութիւն — չափազանցօրէն պաթեթիկ — կան նոյնիսկ դռեհիկ, աններդաշնակ բառեր ու դարձուածներ, դաւառական բարբառներէն փոխ առած, բայց այդ բոլոր թերութիւնները կը կորսուին ընդհանուր ու հոյակապ սիմֆոնիի մէջ, ուր բոլոր լարերը կը միանան կը համադրուին՝ ստեղծելու համար զմայլելի երաժշտութիւն մը: Այդ բոլոր թերութիւններով հանդերձ, Բաֆֆիի լեզուն — թեւաւոր ու պատկերալից, քնարաշունչ եւ տրամադրիկ — կը մնայ ընդհանրապէս յստակ ու վճիտ, մատչելի անգամ զանգուածներուն, զերծ այն թանձր, անվերծանելի մշուշներէն, որոնցով կը սիրեն զարդարել իրենց երկերը հին ու նոր խորհրդապաշտ գրողները:

Ոտանաւորի մէջ եւս բախտ է փորձել — դեռ 60-ական թուականներէն — եւ ըստ երեւոյթին ոչ անյաջող: Ոտանաւորներ գրելու ժամանակ չունեցաւ, բայց այն քիչը, որ արտադրեց, յաւերժացաւ: «Զայն տուր, ո՛վ Ծովակ»ը դարձաւ գրեթէ ազգային հիմն, որ կ'երգեն սերունդները եօթանասնական թուականներէն ի վեր: Շատ երգուեցաւ եւ Հասօի երգը:

Ոսկէ գրիչը այդտեղ եւս — ոտանաւորի մէջ — կը խաղայ խոշընդոտներու հետ, ռիթմն ու երաժշտութիւնը կը մնան անխախտ.

«Բարձր ապառաժի ահռելի կուրծքին
Կպած էր ամրոց, ամրոց ահագին
. . . . . .
Ոչ քար, ոչ աղիւս, ոչ փայտն անտառին
Չէր նիւթը նորա ահեղ շինուածքին
Եւ ոչ վարպետի ձեռքը իմաստուն
Դրեց հիմքերը նորա հաստատուն:

Լոկ դիակներից, արեամբ շաղախուած
Լոկ կմախքներից կոյտերով դիզուած,
Բարձրանում էին պարիսպներ մթին,
Թանձր պարիսպներ մահացու բերդին:

Եւ հրէշային քուրգ ու աշտարակ
Էին մարդկային կառափունք համակ,
Կառափունք իրար վերայ շարէշար՝
Խիստ ֆստմնելի կապէին կամար:

Եօթն էին թուով, եօթն եղբայրներ,
Եօթն էլ վիթխարի, խօլ-խօլ հսկաներ,
Եօթն պատուհաս այդ խուլ ամրոցում
Սնուցանում էր Արիմինն իւր ծոցում:

Սկսուեց մարտը: Եղբայրներ եօթունք
Ունին իրանց դէմ եօթն արքայազունք,
Ուժեր հաւասար, ուժեր սոսկալի
Մարտնչում էին յուսով լիուլի:

Եօթն արքայազնից վեց հոգի ընկան,
Վեց պայծառ արեւ խուզ պատեցան